ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
17.05.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**«ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»**
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

| | | |
|---|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | 02511556 |
| 1.3 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂ. 22 |
| 1.4 Պետական գրանցման համարը | | 211.171.00937 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2002-05-30 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | 093951212<br>011563000 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | www.ekm.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | erkrapahhashvapah@mail.ru |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը<br>ՍԱՄՈՒԻՆ | Ազգանունը<br>ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | Պաշտոնը<br>Նախագահ |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| Կազմակերպությունն աջակցում է  հայրենիքի հզորացման և հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործին : | | |
| Կազմակերպությունն օժանդակում է ՀՀ Զինված ուժերի հզորացման և պատանիների ու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: | | |
| Երկրապահ կամավորականի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովման երաշխիքները սահմանվում է <<Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին>> և <<Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովման մասին>> ՀՀ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: | | |
| Կազմակերպությունը նպաստում է հաշմանդամ, զոհված և անհետ կորած ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը, ցույց է տալիս նյութական և բարոյական օգնություն , աջակցում է նրա քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: | | |
| Կազմակերպությունը կազմակերպում է միջոցառումներ՝ նվիրված ԵԿՄ հավերժ նախագահ Սպարապետ Վազգեն Սարգսյանի հիշատակին: | | |
| Կազմակերպությունը նախաձեռնում է միջոցառումներ՝ Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության ընթացքում, անհետ կորած մարտիկների հիշատակին, ինչպես նաև հերոսական մարտական ուղի անցած երկրապահների մեծարմանը: | | |
| Կազմակերպությունն անվճար իրավաբանական ծառայություններ է մատուցում իր անդամներին: | | |
| Կազմակերպությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում իր անդամների պարբերական հանդիպումների տեղեկատվության փոխանակման համար; | | |
| Կազմակերպությունը լինելով կամավորական հասարակական կազմակերպություն, խնդիր դնելով իր նպաստը բերել ՀՀ և ԱՀ սահմանների պաշտպանությանը և համապատասխան ծրագրերի իրականացմանը համատեղ կնքվող հուշագրերի շրջանակներում համագործակցում է պետական և ոչ պետական կառույցների հետ: | | |
| Կազմակերպությունը համագործակցում է պետական և հասարակական կառույցների, ֆիզիկական անձանց, Սփյուռքի, ինչպես նաև արտասահմանյան նմանատիպ կազմակերպությունների հետ: | | |
| **4 Հասարակական կազմակերպության՝** | | |
| 4.1 Անդամների թիվը | | 15223 |
| 4.2 Կամավորների թիվը | | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | | 5 |
| **6. Իրականացված ծրագրեր՝** | | |

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|

Digitally signed by MIKAYELYAN SASUN 1711570508
Date: 2024.06.10 22:45:40 AMT

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Հայրենիքի հզորացման և հայ ժողովրդի անվտանգության ապահովում | Արշակունյաց 22 | Հայ ժողովրդի անվտանգության ապահովում | Ընթացքի մեջ |
| 2 | ՀՀ Զինված ուժերի հզորացման և պատանիների ու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության սերմանում | Արշակունյաց 22, տարածքային բաժանմունքներ | Պատանիների ու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը | Ընթացքի մեջ |
| 3 | Երկրապահ կամավորականի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովում և նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգնության տրամադրում | Արշակունյաց 22 | Երկրապահ կամավորականները աջակցում են զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովմանը | Ընթացքի մեջ |
| 4 | Հաշվանդամ, զոհված և անհետ կորած ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում, նյութական և բարոյական օգնության տրամադրում, քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն | Արշակունյաց 22 | Կազմակերպությունը ցուցաբերում է աջակցություն, նյութական և բարոյական օգնություն զոհված, հաշվանդամ և անհետ կորած ազատամարտիկների ընտանիքներին | Ընթացքի մեջ |
| 5 | ԵԿՄ հավերժ նախագահ Սպարապետ Վազգեն Սարգսյանի հիշատակին նվիրված միջոցառումների կազմակերպում | Արշակունյաց 22 | Կազմակերպությունը կազմակերպում է միջոցառումներ նվիրված ԵԿՄ հավերժ նախագահ Սպարապետ Վազգեն Սարգսյանի հիշատակին | Ավարտված |
| 6 | Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության ընթացքում զոհված, անհայտ կորած մարտիկների հիշատակին նվիրված միջոցառումների կազմակերպում | Արշակունյաց 22 | Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության ընթացքում զոհված, անհայտ կորած մարտիկների, ինչպես նաև հերոսական մարտական ուղի անցած երիտասարդների մեծարումր | Ընթացքի մեջ |
| 7 | Իրավաբանական ծառայությունների և խորհրդատվությունների տրամադրում | Արշակունյաց 22 | Անվճար իրավաբանական ծառայությունների և խորհրդատվությունների մատուցում երկրապահ անդամներին | Ընթացքի մեջ |
| 8 | ԵԿՄ ուսումնամարզական ճամբարում աղջիկների և պատանիների հանգստի կազմակերպում | Գեղարքունիքի մարզ, Ծովինար համայնք | Երեխաների անհատույց հանգստի կազմակերպում և զինվորական պատրաստակամության մակարդակի բարձրացում | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Երկրապահ կամավորականների զործնեության ապահովում>> ծրագրի իրականացում | Արշակունյաց 22 | Ընթացքի մեջ | ՀՀ պաշտպանության ապահովում | Ծրագրի իրականացում |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 245,666,348 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 245,666,348 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 234,638,000 | ՀՀ ՊՆ |
| 2 | 600,000 | Արտաշատ համայնք |
| 3 | 100,000 | Արենի համայնք |
| 4 | 400,000 | Էջմիածին համայնք |
| 5 | 200,000 | Փարաքար համայնք |
| 6 | 500,000 | Գեղակերտ/Խոյ համայնք |
| 7 | 300,000 | Գայի համայնք |
| 8 | 100,000 | Լոռի-Բերդ համայնք |
| 9 | 200,000 | Ստեփանավան համայնք |
| 10 | 688,348 | Մարտունու քաղաքապետարան |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 237,726,348 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | |
|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | 260,823,662 |

| 10.2 Գույքը | | |
|---|---|---|
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 260,823,662 |

| **11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝** | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 237,726,348 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 237,726,348 |

| **12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝** | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |

| Նշումներ |
|---|
| Օգտագործված դրամական միջոցների թիվն ավելի մեծ է տարեկան մուտքերից, քանի որ նախորդ տարվանից 01.01.2023թ-ի դրությամբ ունեցել ենք դրամական մնացորդ: |

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________3________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ________________
ստորագրություն, անունը, ազգանուն

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

*Հասցե՝ ք. Երևան,Տիգրան Մեծ 4*

*հեռ./ֆաքս՝ /010/ 524724*

*էլ. փոստ : perfectaudit@bk.ru*

*Կայք՝ www.perfectaudit.am*

# Անկախ աուդիտորի եզրակացություն

***Հասարակական կազմակերպության խորհուրդին***

***Եզրակացություն «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության գործունեության հաշվետվության աուդիտի վերաբերյալ***

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀԿ») 2023 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակաշրջանի համար կազմված հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն):

Կազմակերպության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվությունը կազմել է՝ հիմնվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալների վրա, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի 2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների վրա:

Մեր կարծիքով, «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2023 թվականի տարեկան մուտքերի ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը, ինչպես նաև դրամական միջոցների օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի 2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների, ինչպես նաև ԱՄՍ 800 (Հատուկ նկատառումներ-Հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ):

## *Կարծիքի հիմք*

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* » (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների:

Համոզված ենք ,որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ՀԿ գործունեության հաշվետվության համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին,ինչպես նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված լրացման կարգին համապատասխան ՀԿ գործունեության հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,որն ըստ ղեկավարության,անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ՀԿ-ի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն,որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից,անկախ դրա խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը,նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով,և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է ,քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը,քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,զեղծարարություն,միտումնավոր բացթողումներ,սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին առընչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ՝ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը,ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ,և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝գնահատում ենք թե՛ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն,որը կարող է էական կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք,որ առկա է էական անորոշություն,ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին,կամ,երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն,ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք տարեկան հաշվետվության ընդհանուր ներկայացումը,կառուցվածքն ու բովանդակությունը,ներառյալ՝ բացահայտումները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց,ի թիվս այլ հարցերի,հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների,ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի,ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերբերյալ էթիկայի պահանջների,ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին,որոնք ըստ ողջամիտ ենթադրության կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և որտեղ կիրառելի է անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

31 մայիս, 2024 թ.

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Ա. Բաքայան    աուդիտոր Է. Աբրամյան

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» "ПЕРФЕКТ АУДИТ" "PERFECT AUDIT" 02591995

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 10.06.2024 22:39